



ՀՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 140

28 ՄԱՐՏ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

Մարտ	29	†	Կիր.	բձ.	Զ.	Քառասնորդաց	պահոց:	Գալսեան:
	30		Բշ.	բկ.	ԼԶ.	or	աղցից:	
	31		Գշ.	գձ.	ԼԵ.	or	»	
Ապրիլ	1		Դշ.	գկ.	ԼԸ.	or	»	
	2		Եշ.	դձ.	ԼԹ.	or	»	
	3		Ուր.	դկ.	Խ.	or	»	
	4		Շք.	աձ.	ԽԱ.	or	Մեծ-Պահոց:	Տօն է Ղազարու Յարութեան:

Արքուանիս Ս. Աստուածածին Եկեղեցւոյս մեջ տուաչիկայ Ուեծ Պահոց Կիրակի օրերուն քարոզները բուրքերէն լեզուով պիտի տրուին նոյն Եկեղեցւոյ Մեծաւոր Գեր. Աստուծան վարդապետի կողմանէ, հետեւեալ նիւթերուն վրայ.

Ա. Կիրակի. Պէտք է որ զսնուի Եկեղեցւոյ մեջ ուսուցանող իշխանութիւն մը:

Բ. Կիրակի. Պէտք է հաւատարմ Եկեղեցւոյ խօսքին:

Գ. Կիրակի. Պէտք է գործնականապէս հաւատարմ Եկեղեցւոյ խօսքին:

Դ. Կիրակի. Պէտք է հնազանդիլ Եկեղեցւոյ:

Ե. Կիրակի. Պէտք է սիրել Եկեղեցին:

Ծանօթ.— Կիրակի օրերը ժամը 4ին երեկոյեան ժամերգութիւն պիտի կատարուի եւ անմիջապէս յետոյ Քարոզ պիտի տրուի:

* * Նոյն Եկեղեցւոյ մեջ Մարտ 23-28 հոգեւոր կրթութիւն տեղի պիտի ունենայ:

Այս կրթութեան միջոցին ամեն երեկոյ ժամը 5ին Վարդարան պիտի գորցուի, յետոյ բուրքերէն լեզուով պիտի քարոզէ Գեր. Կղեմէս Վ. Աստուծան, եւ ապա Ամենասուրբ Հաղորդութեամբ օրհնութիւն պիտի տրուի:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Զորրոդ տարի ② 28 Մարտ 1914 ② Թիւ 140

«Մերական Քանանայայեսն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շա-
բունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերական Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի Եկ Վայի, առ Ամեն. Տ. Պօլսո Պետրոս Ժ. Թեոքեան, Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
29 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսնամարտ:

ԴԵՊՈՒՆԵՐ ԵՒ ՍԿՂԻՍԻՆՔՆԵՐ

ՏԵՐ ԿՈՍԻՏԱՍՏԱՅ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

(Շար. եւ վերջ)

Հ. Յակինթոս Փրանկիսկոս Բարիգեանի
(P. Hyacinthe François de Paris) նա-
մակներն առ նախարարապետն Գաղղիոյ՝
Բոնապարտէն, 1701—1714, կարծես սրտա-
կեղեք տալի մը պատկերացումն են: Վեր.
Հ. Սահակ Սրապեան, Աստուծոյ հովիտ վար-
դապետը, որ զարմանալի համբերատարու-
թեամբ զանոնք ընդօրինակած է Քաթոլիկ-
ներու դիւանէն, շատ բարեացակամ եղաւ
զանոնք մեր տրամադրութեան տակ դնելու:
այն եղաւ մասամբ առիթն ու զրդապատ-
ճառ ներկայ յօդուածիս: Այդ նամակներու

մէջ հետզհետէ կը նկարագրուին այն ահեղ
հալածանաց բոլոր իրադարձութիւնները, առ-
տիճանաբար. այս ընթերցումը մարդուն սիր-
տը կը կծկէ. այն էջերէն մեր սիրելի նա-
խահարց անպարտ արիւնները կը կաթին...

Ան ժամանակ էջմիածնականները թուրք
կայսրութեան անկողար ոյժը մեծաքանակ
կաշառներով գործածեցին, ու անարգել և
անպիտան կը հալածէին կաթողիկէները: Ա-
հաբեկիչ ոճ մը ունի Հ. Յակինթոս. «էջ-
միածնականք, կ'ըսէ, ինչ որ կ'ուզեն Կա-
թողիկէից դէմ, իսկոյն կը կատարուի: Դուռը
և ոչ իսկ կը քննէ թէ իրենց ամբաստանու-
թիւնները իրա՞ն են թէ սուտ: Ամէն կողմ
մեծամեծ Վէպիրներ, Փաշաներ, Զաւուշներ
Հայերէն դրամ միայն կորզելով, կատաղօրէն
կ'օգնէին այդ հալածանքին»¹: էջմիածնակա-
նաց զլխաւոր նպատակն էր կաթողիկէ Հա-

¹ Նմկ. 2 Նոյեմ. 1701:

յերը Քրիստոսի Կաթողիկէ Եկեղեցիէն ու-
րացնել, և հերձուածի մէջ խարդաւանել,
Մահու սպաննալիքով անոնց առաջարկուած
Հաւատոյ Դաւանութիւնը գիտէք ի՞նչ էր.
— բովանդակ Քրիստոնէութենէն ընդուն-
ուած Քաղկեդոնի Տիեզերական Ուղղափառ
Ս. Ժողովոյն և Ս. Լեւոն Քահանայապետին
դէմ նոյնով և անէծք կարդալ. կ'առաջար-
կէին զայս՝ արքայական ապարսնքին մէջ,
Տիվանի առջեւ. պարհկարանի (bagne) մէջ,
Թիարանի (galères) մէջ, եկեղեցեաց մէջ,
խորհրդոց մատակարարութեան ժամանակ.
Ով որ կը մերժէր, արգէն իսկ դատապար-
տուած էր: Եւ այս՝ տարիներով, դարերով,
եւ այս մարդոց սերունդներն են որ դեռ կը
համարձակին Հաւատաքննութեան (Inquisi-
tion) խօսքը ընել, տգիտական չարութեամբ,
Ուստի, Կաթողիկէութիւնը չորացողներուն
կը մերժուէր ամէն խորհուրդ, պատկ, մկր-
տութիւն, ևն. մինչեւ իսկ մեռեալները ան-
թաղ կը ձգուէին: Հ. Յակինթոս կը պատ-
մէ՝ թէ՝ չբաւելով այն անիրաւ պատրիարք-
ներու անգթութիւնը, էջմիածնի նոր կա-
թողիկոսը՝ Աղեքսանդր, հրամաններ ղրկած
էր մերժելու Կաթողիկէից թաղում և ամէն
խորհուրդներն Եկեղեցւոյ: Ապա կը դառնա-
նար հալածանքը. ինչքերը կը զրաւուէին,
գերդաստաններ կը չքացուէին. կը լեցուէին
բանտերը, Թիարանները, կը շառաչէին չղ-
թաները: Չէր խնայուէր, ո՛չ եպիսկոպոսի,
ո՛չ կղերի. ո՛չ ծերի, ո՛չ մանուկի, ո՛չ կոյ-
սի և ոչ որբի: Աքսորավայրերը կը լեցուէին.
և ի՞նչ աքսոր, ի՞նչ տառապանք, ի՞նչ կըտ-
տանք. անշրդի հորերուն մէջ կը նետուէին
խումբ խումբ. ժայռեր ու անապատներ ի-
րենց արհաւիրքին մէջ կը պարուրէին խեղճ
հաւատացեալները, որոնց շատերը կը մեռ-
նէին անօթի: Անպակաս էին նախկին
դառնադառն խոշտանգանք, որոնք ի պատ-
մութենէ գիտենք, թէ որպիսի՝ ահաւոր տե-
սակներ էին և ո՛րքան ի սովորութեան, մաս-
նաւորապէս կոճեղի մէջ պնդել, այրուցք-
ներ, գանակոծութիւն, բրածեծ առնել, ա-

նօթի կամ անքուն թողուլ յոտնկայս, կըռ-
փահարութիւն, սայրասուր գործիքներով
չարչրկել, գլխու վրայ կրակ կտրած սաղա-
ւարտներ անցընել, ևն.: Սարսափահար փա-
խան գունդագունդ հաւատացեալներ, օտար
երկիրներ գաղթեցին երամ երամ, վայրա-
վաւին ցրուած հօտերու նման: Արեան ճա-
պաղիք կը քալէին, քանզի և սուրը կը կո-
տորէր անխնայ. ծովն ալ կը բանար իր ա-
լիքները՝ անդունդներու մէջ ընկղմելու հա-
մար իր զոհերը: Չկա՛ր ուրիշ միջոց ազա-
տութեան, եթէ ոչ իսլամանալ: Կորան ան-
թիւներ: Մատղաշ մանկիկներ երամովին գե-
րեցան: Տկարներ ալ գտնուեցան, որոնք ի-
րենց ստիպեալ ուրացումը ապա քաւեցին
արցունքներով՝ քրիստոնեայ աշխարհներու
մէջ, ուր մազապուր ապաստանեցան: Հ.
Յակինթոս, այսքան խժոժութեան առջեւ
սրտաճմլիկ հառաչ կ'արձակէ. «Այս ազգը
ինքը զինքը կը ջնջէ անզգալապէս. և Թուր-
քը կ'օգտուի՝ զայն պառակտող անմիաբա-
նութենէն»¹: Այս թախմագին խօսքը բնաւ
կորուսած չէ իր այժմէութիւնը:

Այս ուսումնասիրութիւնները մեծապէս
օգտակար են մեր համայնքին: Կեղծ համե-
րաշխութեան սին խօսքերով կ'ուզուի լռու-
թեան դատապարտել պատմութիւնը. ա՛ս ալ
արուեստ մըն է՝ հին խժոժութիւնները չըք-
մեղացնելու և ամօթները պարտկելու, և նոր
ձեւերը աւելի ընդունելի ընելու: Անկապ-
տելի են սակայն անաչառ Պատմութեան ի-
րաւունքները: Ո՛վ կրնայ իշխանութիւն ու-
նենալ պատմութիւնը ջնջելու կամ լռեցնե-
լու, մանաւանդ յօգուտ յանցաւորներու եւ
ի մեաս տարաբախտ տուժողներու. պէտք
էր այրել Տակիտոսը, Եղիշէն եւ նման
անթիւներ. այլ սակայն հնա՛ր է միթէ, ինչ-
պէս կ'ըսէ նոյն ինքն Տակիտոս առթիւ գրա-
կէզ խարոկներու զորս Հռոմայ հրապարակ-
ներուն մէջ կը լուցանէր գաղանացեալն՝ Իո-
մետիանոս, հնա՛ր է միթէ մարդկութեան
խիղճն ալ ոչնչացնել:

¹ Cette nation se détruit insensiblement elle-même, et le Turc profite de la mésintelligence qui la partage». Նամակ 23 Իեկա. 1702. էջ 62—63.

¹ Նով. 22 Յուլիս 1707.

Պատմութենէն պէտք է դաս առնենք, մեր նախահարց կորովէն պէտք է օրինակ առնենք. հին դէպքերը, նկարագիրները, շարւոյթները կամ բարիքները պէտք է ուղեցոյց ըլլան մեզ: Վեր. Հ. Գրիգորիս Ս. Վ. Դալէմբէրհան, անխոնջ պիտեակներ, անպիտ ջանքեր նուիրեց այս ճիւղին ուսումնասիրութեան, որուն լիակալ արդիւնքները արդէն իսկ հմաւարց հասորներով ու յօդուածներով արձանացուց. եւ որչափ պիտենք դեռ թանկագին հասորներ ունի՝ ձեռագիր, սպասելով որ բարերար ձեռք մը կարկառու լինի՝ ի լոյս ընծայելու համար: Կը մտաւորենք յաջողութիւն:

Մենք այս գծախառ ժամանակներու վրայ աւելի լոյս սփռելու համար, առ այժմ պիտր հրատարակենք վաւերագրութիւն մը, զոր Ինչ. Սեֆման Ն. Ս. Վ. յանձնած էր մեզ. այս է՝ այս հաւաքական նամակը զոր Կ. Պոլսոյ էջմիածնականք գրեր էին, 1106ին, առ Կաթողիկոսն էջմիածնի, բանապրաւ բերել տալու համար Կաթողիկէսցի դէմ: Հրահանգիչ է այս՝ բազում անհապառներով: Թո՛ղ մտածեն ամէն բան միջին դարու խորշերը վտարողները: Արդէն 1102ին, էջմիածնի Կաթողիկոսը, ըստ խորհրանաց Պոլսոյ եւ Էպիփոսէի Ժողովրդեան, բանապրաւ զրկած էր ըսգրէմ Կաթողիկէսաց (Հ. Յակոբիս, Խմբ. 10 Գր. 1102): Այս վաւերագրութիւն մէջ կը տեսնուին անմիտ ու չարամիտ ամբաստանութիւնները, զորոնք առ նամակը յօրինող անխիղճ եկեղեցականը, հաւանաբար Բզմրցիին, կը բարդէ, կը կուտակէ, Կաթողիկէսցի դէմ: Նոյնպէս անոր մէջ կը տեսնուին այն ժամանակի պիտաւոր Կաթողիկէսաց, ինչպէս նաեւ անոնց հակառակորդները որ ստորագրած են: Նոյն Բզմրցիին եղաւ որ այս նամակին պատասխանը շտապելու եւ անոր միջոցաւ իր բաղձացած պատրիարքական աթոռին արտահայտու համար, վաղեց պիտեց էջմիածին, առ Աղեքանդը Կաթողիկոս, «Սարդ մը՝ զրեթէ միեւնոյն նկարագրով, որ Բզմրցիին ամէն ըսածին համակարծիք ըլլալով, իր գրաւոր հրամանները անոր յանձնեց, եւ բաց աստի անոր ձեռքը տուաւ նաեւ բանապրա-

նաց թուղթ մը բազմաթիւ եպիսկոպոսաց, քահանայից եւ Ժողովրդականաց դէմ՝ յակնեյ յանուանէ, զորս կ'ամբաստանէր իբր Կաթողիկէսաց»¹: Հ. Յակոբիսոյ այս կաթողիկոսական թղթէն օրինակ մը ձեռք բերած էր. «Անք, Կ'ըսէ, լեցուն է թոյնով Կաթողիկէսցի դէմ»: Արդէն 1107 Յուլիան Պոլիս վերադարձած էր Բզմրցիին այս թուղթը ծոցին մէջ. կուսակցութեան կազմեց, ներկայացաւ անգլաւ Ջօրլուլուն. այս թուղթին թարգմանութիւնը խայտացուց այդ կատաղի հաւածը: Կէսըրը. իսկ Բզմրցիին անմեղներու հարստահարութեամբ կորզած եւ իրեն մատուցած երեսուն ու վեց քսակ² ոսկիները, իր շարաշուք ճակատին խորշոմները պարզեցին: Ջօրլուլուն, յօդս ցնդեցան Սահակ պատրիարքին դառն ամբաստանութիւնները, որոնցմով ամէն ոք կը սպասէր այն օր տեսնել Բզմրցիին վարադարէն տատանելը: Բզմրցիին վաճառաւ զգնյաւ եւ պատրիարք աղաւ: Իժմախա պարագայ. Սաւրոքորտաթօ՝ արքայական յոյն բժշկապետ եւ ապահաւոր քաղաքագէտ, բարեխօսած էր Բզմրցիին համար: Եւ Բզմրցիին «Իսկոյն պայթեցուց իր անգրեթէ թիւերը եւ իր անգրեթէ թիւերը»³: Ամէն կողմ կ'այրէր, կ'ամայացէր հաւածանքով: Նրեք շաքաթ վերջը իր անօրէն սուրին տակ կ'ըլլար: Ծ. Գոմրասոյ օրոհալ պիտաւ: Փոքր վա հանել տուած էին Բզմրցիին եւ Ջօրլուլուն. «Ամէն բայա որ չը հապառակը իր խաղաւորին, ապստամբ է. ամէն կաթողիկ որ չը թողուր Կաթողիկէսութիւնը անհապառք ու ապստամբ է, եւ արժանի մահու, որմէ չկրնար ազատուիլ եթէ ոչ թրքաւաղով»⁴: Ս. յակոբիս ժամանակներ էին:

Ի շեծուկս այս անճիտող ու չարունակալ հալածանաց, Աստուած այնպէս նախախառաց որ, ինչպէս յիշատատ, յԱսպղրա, ի Դարմանիւս եւ այլուր, նոյնպէս նաեւ Հայ Կաթողիկէսաց կրցան կազմել ուրոյն համայնք եւ ունենալ զատ Պատրիարքութիւն եւ Իսթրիքութիւն եւ կանոնաւոր եւ նախանձնիւրօրէն կարգապահ Նուիրապետութիւն մը:

¹ Հ. Յակոբիս. Խմբ. 7 Նշմ. 1707:

² Նուրջ երկու հազար չորս հարիւր ոսկի, այն ժամանակի համար ոչափաւ գումար մը:

³ «Il a fait éclater son inhumanité et son irréligion». Հ. Յակոբիս. Խմբ. 7:

ԱՅԻԼԷՍԻՁ...!

(Տեկամի)

Մա մաֆիյն, չօճուղըն գալպինտէ պիր է-
սէրի իւմիտ բարըլտամագտա իտի:

— Վալիտէմին ճէվապընը պէքէյէյիմ,
պագայըմ, պէնի չօզ սէվէր, տէր իտի:

Ինթիզար իթտիյի պու մէքթուպ անճագ
ֆէրտասը կիւն վասըլ օլտու: Օ սըրատա չօ-
ճուզ տէրսխանէտէ պուլուռնըյօրտը: Մէքթէպ
միւտիրի մէքթուպը վէրիր վէրմէզ, աչտը օ-
գուտը:

Նիս, 24 Դեկտ. 1910

«Ակկիլի Բօժեմ

«Մէքթուպըն գալպիմի բարէլէտի. ֆա-
պթ սէնին արզուռնա միւմաշաթ իթմէք գա-
պիլ տէյիլ տիր: Մէքթուպըմըն պալասընտա-
քի Նիս իպարէսինտէն անլայօրսուռն քի պու
մէքթուպը օ չէնիրտէն եագըյօրուլմ, վէ սէն-
տէն բէք ուզագ պուլուռնըյօրուլմ. պինտէն
ալէյի սէ սէնի եանըմա կէթիրմէք միւմքին
տէյիլ տիր: Պուռնուռնա պէրապէր պուրասը
բէք կիւզէլ տիր: Աչըզճա սէյլէյէյիմ, շիմ-
տի պէն եէնի իզտիվաճըմտան սօնրա հօլ-
ճուլըզա չըգմըլըմ: Սէն տէ պիլիրսին քի բէ-
տէրին պէնի պրագտըլգտան սօնրա պէն տէ
կալընըզ տուրամագտըմ: չու հալտէ պէն
սալի քէնտիսի կիսլի եաքտըմ վէ էվլէնտիմ:
Պուռնտան տօլայը պէնի մուախագա իտէմէզ-
սին:

«Սէնի զէվճիմէ թանըթտըմայը սանա
վատ իտէրիմ: Չօզ լաթիֆ պիր գաթ տըլ.
սէնին հագգընտա ճէրէհան իտէն միւքեալէ-
մէսինտէն չու գատարընը անլայապիլտիմ քի
սանա գարըլ պիր թէվէճճիւհիւ վար տըր վէ
սէնի մէմնուռն իթմէք ճիւնէթինի իլթիզամ
իտէճէք տիր: Էյլէ օլտուգտան սօնրա արա
սըրա սէնի էվիմիզէ տէ սապէթ իտէպիլի-
րիզ:

«Չալըլ, էյլէ իսէ, օլլուլմ, տէրալէրին-
տէ էյի նիւմէրօլար գագանմաղա զայրէթ էյլէ:

«Շէֆագաթը գալպիյէմ իլէ սէնի տէր
աղուլ իտէրիմ:

«Ակկիլի վալիսէն
1910. 12. 24

Չօճուզ պիր թարաֆտան պու մէքթուպը
օգուլօր օ պիր թարաֆտան տա սըճագ սը-
ճագ կէօզ եաշլարը տէօքիւլօրտը:

Դալպինին թէէսիւրիւնտէն վէ հըչըրը-
ղընըն շիտտէթինտէն հէման պօղազը գա-
բանմագ իւզրէ օլտուղընը հիսս իտէրէք պէտ-
պալիթ չօճուզ տէրսխանէտէն տիշարը ֆըր-
լատը: Այագտա տուրմաղա մէճալը գալմա-
տըղընտան, եէրէ տիւշմէմէք իշուռն պիր տի-
վարա սալանտը տուրտը:

Վէքիլխարճ էֆէնտի օրատան կէշալիյի սը-
րատա չօճուզա եագլաշարագ,

— Նէ տիր պու, Շաթէն, նիշին աղ-
լայօրսուռն:

Չօճուզ կէօզ եաշլարըլա ըսլանըլ օլան
մէքթուպը օնա ուզալտըլ:

Վէքիլխարճ էֆէնտի տալի մէքթուպը
օգուտըղընտա ֆէվզ էլ հատու միւթէէստիր
օլտուլ:

— Իշթէ, էֆէնտի, կէօրիւլօրսուռնըզ քի
սնամ պապամ վար օլտուղըն հալտէ պէն ար-
թըզ եէթիմ օլմուլըմ:

Վէ գալպինին աճըսընտան յէօյլէ սէօյլէ-
յօրտըլ:

— Ահ, էյէր էօլմիւլ օլտուլարտը... Իշ-
թէ պուռնտան պէօյլէ պիրինին տէ օ պիրինին
տէ մուճիպի ար ու հիճապը օլաճաղըմ: Պու
կիւն հէր իքիսինին տէ ինքեար իթտիյի պիր
իզտիվաճըն մահսուլը պէտպալիլը կիսլի օր-
թատա տուրմաղալըմ... պագընըզ, պէն հէր
իքիսինէ տէ սըզընթը վէրիլօրուլմ... պար օ-
լուլօրուլմ... պէնտէն գաչընըյօրար... ար-
թըզ պէն ալիլէսիզ, օճագըլզ գալտըմ... լա-
նէթ օլտուռն պուռնալըն եէկտիկէրինի թաթ-
լիզ իթտիյի կիւնէ:

Վէքիլխարճ էֆէնտի պապանըն մէքթու-
պընը տա օգուտուգտան սօնրա պաշլատը օ-
նա թէսէլլի վէրմէյէ:

— Միւսթէրիյի օլ, օլլուլմ, միւսթէրիյի
օլ. բէք պու գատար աղըրընա կիթմէսին...
մատամ քի հիւքիւմէթին գանուռն օնլարըն
պիրիպիրէրինտէն ալըրմասընա միւսաատէ
լիթմիշ տիր, հաթթա ֆէսիլի նիքեան տա
լիթմիշ տիր, թապիլի օնլար հիշ պիւ գայտլա
մուգալէտ օլմայուլ արթըզ սէրպէսթ գալ-
միշլարտը... պինտէն ալէյի տէ...

Չօճուգ քէնտի քէնտինի պիր թօրաւոր վէ գուվվէթի սէս իլէ .

— Հէբսի էյի, ֆազաթ արատա գալմըշ օլտն շու պիշարէ էվլատ նէ՝ օլաճագ տըր, տէյէ նիտա իթտի :

*
* *

Վէթիլխարճ պու գատար ազիմ պիր քէտէր գարշըսնտա աճիզ գալարագ, չէթիլիր կիտէրվէ ուզուն գօրրիտօրլարը կէշտիյի սըրատա քէնտի քէնտինէ չէօյլէճէ պիր թէֆէքթիւր իտէրտի :

— Պու նէ՝ սէֆիլ պիր գանուռն տըր քի պու կիւն՝, գէվալլը Ֆրանսա թօրաղըմըզըն իւզէրինտէ, սէնէտէն սէնէյէ պինլէրճէ աշալլը պապալլը եէթիմլէր պըրազըյօր, օճագլար սէօնտիւրիւյօր, ֆէրահ գալպլէրի գան աղլաթըյօր...

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Գ.

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՀԱՆԴԷՊ

(Շար.)

Բանաւոր ըլլանք, վասնզի բանական մարդ ենք : Բայց խօսքերնիս անոնց հետ է, որ կը դաւանին բարի : «Բարի եւ չար չկայ, այլ ամեն բան հետեւանք է սխալ կազմակերպութեան մը, որ նախասիւս մարդն աւրած է, հեռացնելով բնութեան, որ բանին մէջ է միակ չարիքն» (Խուլ. պիլծ թերթ մը 8 Սեպտեմբեր 1901) : Թէ «Եղեռնագործութիւնը, ոճիր բնական եւ ընկերական բնեւեոյթ մի է, ինչպէս խեղութիւնը եւ անճանապանութիւնը, որ առաջ կուգայ ոճրագործին մարմնոյ եւ հոգեկան արակարգ կազմուածքէն՝ ինչպէս նաեւ Ֆիզիքական եւ ընկերական միջավայրի ազդեցութեան» (Ferri Socialismo e scienza positiva p. 42. 43.) : Թէ «Արդի պատճական դուրսիւններն, որ հիմնուած են անճիւղաւորութեան եւ բարոյական յանցանքի գաղափարին վրայ, կեղծաւորական ստութիւններ են» (նոյնը) : Թէ «Բարոյականի պահանջն է որ դադրի մարդկային գործոց վարձատրութիւն կամ պատիժ»

(Stern) : Ուստի «Յաւիտեանական վարձատրութեան եւ պատժոյ գաղափարներն մարդկութեան մանուկ տիպ ծաղրելի գաղափարներն են», ուստի կրնայ երգուիլ հեգնօրէն . «Ո՛վ սասանայ, զիս դժոխք տա՛ր, զի ես երկինք չեմ երթար» (Kelgel. soc. democ. Liederbuch) : Այս կարգի դաւանանք ունեցողներէ պիտի խնդրէինք, որ գէթ ազատական չլսուին եւ չի խօսին յանուն ազատութեան, զոր կ'ուրանան⁽¹⁾ :

Բանի որ կամքը գիտակցութիւն ունի ընտրածին, որոշումին եւ իր շարժումին, ըսել է թէ նա բանականութեան առաջնորդութեամբ գիտէ խտրութիւն զնեւ գործի եւ գործի մէջ, որ ըսել է թէ նա խիղճ ունի, խիղճն ալ եւրոպական լեզուով գիտակցութիւնն է (conscience) : Անշուշտ բարոյականի, պատկառանքի, ամօթխածութեան, օրէնքի եւ իրաւունքի թշնամիներն, անոնք մէկ խօքով, որ բարին եւ չարն մէկ բան կը նկատեն՝ պիտի հեգնեն խիղճը, ինչպէս ըրաւ մամոնայի չաստուծոյն հաւատարիմ երկրպագու Անգղիացի մը, որ ըսաւ . «Ո՛հ խըղճ մտանքն այնքան սուղ է որ չ'արժէր անկից հաս մը իսկ ունենայ» : Սուղ է նա նիւթապաշտ, երկրաքարչ զգայասիրին . վասն զի իր անկարգ հեշտութեանց ու շուայտութեանց գնովն պիտի կարենայ ձեռք բերել զայն :

(1) Մեր Կաթողիկէ Արձագանգը կ'ողբար Նաւասարդ գրքի մը անառակութիւններն . տակէց նուազ ողբալի չէ՞ Երկունք թերթը, որ դաշնակցականաց պաշտօնական օրկանն է եղեր . բաւական է թերթատել Հայ տառերու յրեկինին նուիրուած մէկ թիւը : Հայ տառերու, Հայ տպագրութեան սրբազոյժութիւնն են այս եւ ասոր նման հրատարակութիւններ, որոնք տնտեսական անամօթութեանց մէջ միայն կը գտնեն գեղարուեստի ճաշակը, ինչպէս տպականած քիմքեր կը գուարճանան յաճախ նեխութիւններով : Եւ այդպէս տգիտելով կ'արհամարհեն ճշմարտն ու բարին : Կը Հայհոյեն ամենապսեմ խորհուրդներու դէմ, եւ կը ծանակեն ապագայ կեանքը իր բոլոր արհաւիրքներով : Կարելի չէ այդ կարգի հրատարակութեանց առջեւ շտեմել ազգային մեծ տնկումի մը մօտաւոր ապագան : Անշուշտ այն տպագրական հաստատութիւններ որ կրնան հակադդիշ գործունէութեան մը դէմ գնել եւ անկարեկիր կը մնան, ծանրապէս պատասխանատու են :

սուղ է աղքատներն կեղեքող, վաշխառու հարուստին, որ իւր անիրաւութեանց գնով պիտի գնէ զայն. սուղ է դաւաճան ու զըրպարտիչ լեզուներու՝ որ պիտի գնեն զայն ծանր հատուցման մը կշիռով. սուղ է անբարասանակ, անպատկառ հայհոյիչներու Ստտուծոյ, կրօնքի եւ անոր պաշտօնէից դէմ. վասնզի խոնարհեցուցիչ, բայց կարեւոր յետս կոչումով մը պիտի վերստանան զայն. սուղ է իշխանութեան, իրաւունքի եւ օրէնքի թշնամիներուն, որոնք հպատակութեան, արդարութեան եւ հնազանդութեան թանկապին առաքինութիւններով ձեռք պիտի բերեն. սուղ է ամէն անոնց որ կրքերնին սանձելով, ըրած մեամսին հատուցանելով, մեղքերնին քաւելով, չարութեան ու սոււած զրկանքնուն հեռեւանքն տուածելով, տուած գայթակղութիւննին սրբագրելով պիտի ուզեն վերադառնալ առաքինութեան ճամբան: Սուղ է այո՛, բայց կարեւոր. սուղ է բայց մարդավայել, սուղ է, բայց ազատութեան պահանջն է, եթէ ազատութիւն կ'ուզենք իմանալ կամքի այն տիրողութիւնն իր գործոց վրայ որ գիտէ զայն ուղղել առ բարին:

Հարկ է քիչ մըն ալ խոփլ կամքի գործոց այս ուղղութիւնը խորհրդածելու մէջ, լաւ եւս տեսնելու համար թէ բարոյականութիւնը ազատութեան ծնունդն է եւ ազատութիւնը բարոյականութեան վը պարտի իր բարերար ու մարդավայել ուղղութիւնը: Բարոյականութիւնը մարդկային բարքի տեսակն որոշող յատկութիւնն է, բարքն ալ մարդկային գործողութեանց բովանդակութիւնն է, մարդկային գործողութիւններն ալ կը մեկնին կամեցողութենէ եւ ոս կամքի ինքնորոշումէն, զոր ազատութիւն կ'անուանենք: Ուղիղ ազատութիւնն՝ բարութիւն, մոլորածն՝ չարութիւն կը ծնի: Սոսքերնիս բանական եւ բանաւոր ազատութեան վրայ է, որ միայն մարդկային է եւ մարդավայել. եւ ամէն անգամ որ գործ մը առաջ կուգայ առաջադրող եւ որոշող բանականութենէ հարկ է որ բարի ըլլայ կամ չար: Եւ այս բարոյականութեան առաջին եւ հիմնական ուղեցոյցն է վախճանն, զոր ունենալու է ամէն

բանաւոր գործ: Եւս մը որ աղեղէն կը մեկնի, ունենալու է նշաւակ մը, եւ այդ նշաւակի դիրքէն կախում ունի նետի ուղղութիւնը, եթէ վերն է՝ վերելք մը կ'ըլլայ նետին ընթացքը, եթէ վար՝ վարէջք մը կ'ըլլայ: Կամեցողութիւնն շարժում մըն է դէպի առարկայ մը, եւ այս՝ անոր նշաւակէն, վախճանն է: Դիտեցէ՛ք, որ կամեցողութեան վրայ է խօսքերնիս եւ ոչ լոկ բաղձանքի: Բաղձանքը ձգտում մի է, կամեցողութիւնն որոշ ընտրութիւն. բաղձանքը կրնայ շարժիլ դէպի կարելին եւ անկարելին, կամեցողութիւնը միայն դէպի կարելին. բաղձանքը միշտ ներգործական եւ ինքնորոշ չէ, մինչդեռ կամեցողութիւնը ներգործական է եւ գիտակցութեամբ որոշուած: Ուստի ասոր մէջ է որ ազատութիւնը կըրնայ տեսնուիլ որոշ կերպով՝ յորեւ արտագրիչ բարոյականութեան եւ բարոյական պատասխանատուութեան պատճառ: Վասն զի վախճանի մը ընտրութիւնը եւ առ այն շարժում մը հարկ է որ ողատ կամեցողութեամբ ըլլայ, բարի կամ չար ընելու համար գործ մը: Վախճանը ուրեմն կամեցողութեան բարոյական վիճակը կ'որոշէ եւ անոր տառարկան է, եւ որովհետեւ կամքն ու կամեցողութիւնը անպատճառ դէպի բարին կը շարժին, անոր համար վախճանը կամ իրօք բարի ըլլալու է կամ գէթ բարի երեւնալու է որ կարենայ զկամքը գրաւել ու շարժել: Եւ հոս դիտելու է թէ բարութեան ու վախճանի հարկը կամքի ազատութիւնը չին խանգարել, վասն զի կամեց եւ ազատութեան հարկ ու սահման է բարին առհասարակ, բայց ո՛չ մասնակի բարին, որուն առջեւ ընտրութեան ազատութիւնը կը մնայ անձեռնմխելի: Հետեւաբար բարոյականութիւնը առհասարակ անհատական ազատութենէ անկախ է, եւ ասոր համար ամէն ազատ անձ միշտ բարի չի գործեր, բայց անհատական ազատութիւնը պատճառ է եւ աղբիւր պատասխանատուութիւնը բարոյն հանդէպ: Ուստի կայ բարին եւ բարութիւն իրականապէս՝ թէեւ այս կամ այն բարւոյ առջեւ կամքը բռնութեան տակ զսնուի արտաքին պատճառներ

րով, պատասխանատուութիւնը կ'աւելնայ կամ կը պակսի անհատին կողմէ, բայց իրական բարոյականութիւնը կը մնայ անխախտ. վասն զի ասոր հիմնական օրէնքն է Աստուծոյ յաւիտեանական օրէնքը, որ անփոփոխելի է բնական օրինաց պէս: Ասոր համար կը սխալին հանդիսապէս անոնք, որ բարոյականութիւնը միայն անհատականութեան մէջ կը գտնեն, կամ ժողովրդոց հաւանութեան եւ կամեցողութեան ծնունդ կ'ըսեն, եւ կամ քաղաքական օրինաց մէկ տրամադրութիւնը կը նկատեն: Այս պարագային այսօր բարի ըստածը՝ վաղը չար պիտի կարենար ըլլալ, որ նոյնքան հակառակ է բնական օրինաց, որքան հակառակ է որ կրակը վաղը ջուր ըլլայ: Կը սխալին անոնք որ հաճոյից եւ շահու հետ կը շփոթեն բարոյականութիւնը, բարի անուանելով ինչ որ հաճոյական եւ շահաւոր է. սրբան տգեղ անառակութիւններ եւ հարստահարիչ զրկանքներ պիտի արդարանային այս սկզբունքով: Կը սխալին անոնք որ Լուստերի եւ Կալվինոսի հետ կ'ըսեն թէ ամէն մարդու եւ նոյն իսկ արդարոց գործերն մահացու մեղք ըլլան, վասն զի ասոնք մեղքը հարկ մը կը նկատեն եւ ազատութիւնը ու մարդկային կամքը առ հասարարակ միայն մեղաց գործիք, ու այսպէս յուսահատեցողիչ յուռետեսութեամբ մը կը դատաւարանն այնքան գիւցաղնական առաքինութիւններ ու բարեգործութիւններ, որոնք, փառք Աստուծոյ, այսօր ալ պակաս չեն: Մարդկային կամքը առ բարին հակած է միշտ եւ բանական մարդը պատասխանատու է անպատճառ՝ իր գործոց, հետեւաբար կամ առ բարին ուղղելու է զայնս կամ բարիէն շեղելու է. ազատ է մին կամ միւսն ընտրելու, ուստի կարելի չէ որ բարոյականութենէ դուրս գործէ՝ եթէ մարդկօրէն այսինքն գիտակցաբար գործէ, որով ըրածն անպատճառ կամ բարի է կամ չար: Եթէ ազատութիւնն բարւոյն եւ ճշմարտին մէջ հաստատուած կամքի եւ մտքի ձեռքն ըլլար՝ անմեղանչական պիտի ըլլար, բայց դժբախտաբար կամքն ու միտքն ինկած են իրենց պատուածաստեղծ նախնական ուղղութիւնէն,

որով ինչպէս միտքն միշտ յատակ չի տեսներ եւ կը մոլորի յաճախ, նոյնպէս կամքը չի կրնար միշտ խտրել բարին եւ կը խոտորի իւր նշաւակէն, իր բնական վախճանէն՝ բարութենէն: Այս պարագային ալ սակայն կը ջանայ իր չարութիւնը արդարացնել կամ բարութիւն կարծելով ըրածը, կամ բարութիւն անուանելով ինքնախաբ եւ ուրիշին աչքին ալ փոշի նետող պատրուակներով:

(Շարունակելի)

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍՎԶԲԱՆՑ ՎՐԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴ ԱՇՈՒԹԻ ԵՒ ՆՍԷԳ (*)

Ծ.

«Բարեկիրք եւ բարեմայն ըլլաւ,
«Եւ պիտի ըլլաւ սիրելի»:

Ա.

«Բարեկիրք ըլլաւ»

Փափաքելի է որ, այս անկեղծ բարեկրթութիւնը, որուն վրայ կը խօսինք, կրիտատարղներուն ներշնչուի. այն ատեն ասոնք պիտի ունենան այն առաքինութիւնները որոնց կեղծ բարեկրթութեան նմանիլ կը ջանան, և չունին. ասոնք էականը, բարեկրթութեան բողոք, արձատր, հիմը պիտի ունենան, և իրենց գիւրին պիտի ըլլայ ապա անոր արտաքինը և շնորհալի կեցւոյն ալ ձեռք բերելը: Ասոր համար թո՛ղ բարեկիրթ անձեր տեսնեն, զանոնք գիտեն, և փութով պիտի սորվին անոնցմէ՝ իրենց ընկելքը և ինչպէս ընկելքը: Երբ զայն գիտնան, առանց արուեստականութեան ի գործ գնեն. արուեստականութիւնն ամէն բան կը իւանգարէ. և նուազ ծիծաղելի է մարդ իւր ունեցած թերութիւններով, քան ունենալ կեղծած ձիրքերով: Իմաստուն և բարեկիրթ մարդն մէկու մը հանդէպ չի թերանար, և երբեք չի զարմանար և չ'այլայլիր, երբ ուրիշներն իրեն հանդէպ թերանան. տմարդութիւնները կը զգայ, բայց չի դժկամակիր ատոր համար, և

(*) ՏԷ՝ ԹԻՒ 433, էջ 93.

երբեմն ատոնց նոյն իսկ չի պատասխաներ . եթէ ոչ աւելի մեծ բարեկրթութեամբ մը , որով ազնուաբար վրէժ կը լուծէ :

Կդեմէս ԺԴ . Բահանայապետին կենսա-
զրութեան մէջ կը կարդանք զէպօ մը , որ
այդ Բահանայապետին պատիւ կը բերէ : Երբ
ինքը դեռ Փրանկիսկեան կրօնաւոր մը Պոյո-
նիա կը գտնուէր , որ մը վանագ մէջ Լիոն
քաղաքէն դեռ նոր ժամանած պճնասէր և
սիրուն երիտասարդ մը պատահեցաւ , որ ի-
րեն ըսաւ , « Հա՛յր իմ , ճեմարիքը քսելու հա-
մար , անգործութեամբ պատճառաւ է որ հոս
ձեռ Բոյ պստելու եկած եմ . վասն զի չեմ
կրնար կրօնաւորներ տեսնել » : « Թեքեա սե-
ղանատն մէջ հանդուրժես զանոնք տեսնել ,
պատասխանեց իրեն Հայր Կանկանիոյի . « Ուս-
տի կը խնդրեմ հոն գալ եւ զովացուցիչ բան
մը առնուլ : Երիտասարդը ընդունեցաւ . խօ-
սակցութիւնը շարունակուեցաւ և երիտա-
սարդը ա՛յնչափ գոհ մնաց այդ կրօնաւորին
հանձարէն և կերակուրէն , որ այնքան վա-
ղելուց կերպով զինքը ընդունած էր վասն զի
երկու ամիս Պոյոնիա մնաց զինքը տեսնելու
համար միայն : Այդ կրօնաւորին խորհուրդո-
վը իր ծնողաց քով վերադարձաւ , որոնցմէ
անառակութեան համար փախած էր . և ո-
րոնք զինքը իսնդաղատանօք կը սիրէին :

Բարեկիրթ մարդը ոչ միայն մէկը վշտա-
ցընել չ'ուզեր , այլ , ընդհակառակն , կ'ուզէ
և կը փնտոէ հաճոյական յարգանքներ մա-
տուցանելու ամէն առիթներ . բայց երբեք
անհամ և ոչ ալ ծաղրելի մեծարանքներ չը-
նէր : Կազմ եւ պատրաստ իրմէ խնդրուած
ամէն բան կատարելու , իր հաճոյակատարու-
թիւնը ամենեւին ծառայական և ոչ ալ ա-
նարգ բան մը չուէր : Կանխող այն ամէն բա-
նի մէջ , զոր կարող է ընել , իր բարեկրթու-
թիւնը բնաւ արուեստական , այսինքն չինծու
և տաղտկայից չէ : Կ'առաջարկէ բայց քիչ
անցամ կրթականօք , երբեք չի ստիպեր . մարդ
անոր քով և անոր հետ ունի և կը վայելէ
այն ամէն սպաստութիւնը , զոր կը փափաքի
ուեննայ և վաղից ուրիշներու քով և ու-
րիշներու հետ : Մտադիր և հաճոյակատար է ,
բայց առանց այն մեծարիչ քաղաքավարա-

կան ձեւերու , որոնք անհանգիստ կ'ընեն
մարդը և առանց այն երախտագիտութեան
պահանջման , որոնք տհաճելի են և ուրիշի
հաճոյք պատճառելու համար եւ ըրած ամէն
բանին մէջ , այնպիսի յօժարութեամբ մը զա-
նոնք կ'ընէ , որ կը թուի թէ աւելի իւր
քան թէ ուրիշներու հաճոյքին համար ընէ :
Բարեկիրթ մարդն իւր կերպերը եւ խօսքե-
րը կը չափէ այն տարբեր նկարագիրներու
վրայ , որոնց հետ ինք կը գտնուի : Ժամա-
նակը եւ պարագաները կը դիտէ , պատեհ
ժամուն գալու եւ մեկնելու համար անբե-
ւոյթ կ'ըլլայ ճիշդ այն վայրկեանին , որմէ
ետք եկող վայրկեանին կը նախատեսէ
թէ իւր ներկայութիւնն կրնայ անհանգիստ
ընել կամ ձանձրացնել : Բայց ի՞նչ կ'ըսեմ ,
բարեկիրթ մարդն կրնայ երբեք անհանգըս-
տութիւն կամ տաղտկութիւն պատճառել :
Ամէն տեղ անոր կը փափաքին , հաճոյքով
անոր գալուստը կ'ողջունեն , եւ տհաճու-
թեամբ անոր մեկնիլը կը տեսնեն . ամէն
զոհերն եւ ամէն սրտերն անոր տալիւ բաց են :

Բարեկրթութիւնն վեհագոյն՝ ամէնէն ըն-
տիր յատկութեանց , ամէնէն փայլուն ձիւ-
քերու , որոնք յաճախ աւելի նախանձոտներ
եւ անտարբերներ , քան թէ բարեկամներ կը
հայթայթեն , մարդկանց սիրոյն վրայ միշտ
ապահովեալ իրաւունքներ ունի , ինքն ամէ-
նուն հաճելի է . մէկը չի գտնուիր , որ բա-
րեկիրթ մարդու մը հետ յարաբերութիւն
հաստատելու հաճոյքը չզգայ . միայն թէ այդ
չափազանց չըլլայ . վասն զի , թէպէտեւ ա-
ւելի դիւրաւ ներելի է բարեկրթութեան
չափազանցութիւնն , քան թէ ամարդու-
թիւնն . բայց կան մարդիկներ , որոնք աւե-
լի բարեկիրթ երեւնալու համար , այնչափ
սեթեւեթեայ եւ արուեստակեալ են , որ շատ
հաճելի ըլլալ ուզելով , անհաճոյ կ'ըլլան . ի-
րենց ըրած բարիքը , շատ աւելի լաւ կերպով
ընել ուզելով , կը խանգարեն , եւ շատ աւե-
լի բարեկիրթ պիտի ըլլային , եթէ բարեկիրթ
երեւնալու քիչ մը նուազ ջանք ընէին : Կը
յոգնեցնեն եւ կը ձանձրացնեն իրենց չափա-
զանց մեծարանքներովն , զորոնք ամէնուն
անխափր կը չռայեն , եւ յորոնք ոչ ոք կը

շողոքորթեն։ Այսպիսիներն ոչ միայն անհանդուրժելի կ'ըլլան, այլեւ ատելի իրենց ունայնութեամբ, որ սուլորաբար իրենց բարեկրթութեան նպատակն է։ զոհունակութեան այն ձեւերով, զորոնք իրենց գէմքին վրայ կ'արտայայտեն։ եւ, մինչ իրենք իրենցմէ շատ գոհ են, ուրիշներուն կարեկցութիւնը կը շարժեն։ Բարեկրթութիւնն, երբ պատշաճապէս ի գործ դրուի, խօսքերու եւ գործերու ամենէն գեղեցիկ զարպն է։ Իրմէ առաջնորդուած ամենափոքր բաներն՝ միշտ շնորհալի են։ Բարեկրթութիւնն՝ արժանիքն իսկ կը գեղեցկացնէ։ Դիտէ՛ եւ տե՛ս սա աղամանդին գեղեցկութիւնը եւ փայլը, զոր արուեստն ինամով քանդակած է։ Ոչինչ կրնայ ասոր արձակած ճառագայթներուն կենդանութեան հաւասարի։ Լոյսն հազարումէկ տարրեր կերպերով անոր մէջ կը ցոլայ, եւ զոր այդ աղամանդն աւելի կենդանի, աւելի փայլուն, աւելի շողշողուն հոտ կը դարձնէ, քան երբ ինքն այդ յոյս ընդունեցաւ լուսաւոր աստղէն կամ ջահէն, որ անոր սկիզբ եւ ծագումն է։ Որչափ տարբեր է սնկէ, ինչպէս էր, երբ զինքը երկրիս ծոցէն դուրս հանեցին։ Այն առտին հազիւ թէ մարդկանց ակնարկը իր վրայ կը դարձնէր։ զինքը ուրիշ բաներու նախադասելու արժանաւոր բան մը չէր ընծայեր։ մեր աչքերուն փայլելու համար՝ կը սպասէր որ յաջողակ ձեռք մը զանիկայ յղկէ, եւ սնոր փայլը արգելող ամէն բաներէն զինքը մերկայնէ։ Այսպէս առանց հաճոյակասար եւ հաճելի ձեւերու, առանց բարեկիրթ եւ շնորհալի կերպերու, հոգւոյ եւ սրտի ամենալարգելի ձիւքերն իսկ կրնան ուրիշներուն եւ մեզի համար ալ կորսուիլ։ Բարեկրթութիւնն է որ զիրենք կը փայլեցնէ, եւ անոնց զին կը ստանան։ Ինքն է որ, կերպով մը, մարդիկները կը կատարելագործէ, և զանոնք գնահատելի կ'ընծայէ։ Որպիսի՞ ուշադրութիւն պէտք չէ՝ լաւագոյն բաները կոչու ծածկոյթի մը տակէն երեւան հանելու համար։ յաճախ մարդ եւ ոչ իսկ կը կասկածի թէ, առոնք հոն պահուած ըլլան, և զանց կ'ընեն զանոնք։ Ո՛րչափ հաստատուն առա-

քինութեան տէր մարդիկ կան, որոնց արժանիքն չժուտորաւ սակաւութիւն անձանց կողմանէ միայն ճանչցուած է, անոր համար որ՝ այս հաճելի բարեկրթութիւնը իրենց կը պակսի։ Անոր համար այնչափ տմարդի և կոչու մարդիկներ կը տեսնուին, որովհետեւ բարեկրթութեան ամէն օգուտներուն և առաւելութեանց վրայ չի մտածուիր։ Ասոնք կերպերը, իրեւ փոքր և անկարեւոր բաներ զանց կ'ընեն, և չեն գիտեր թէ, յաճախ կերպերն են, որոնք զմեզ ուրիշներէն լաւ կամ յոռի դատել կու տան։ Մարդու ներքինն չեն կրնար թափանցել, հետեւաբար արտաքուստ նշմարուածէն կը դատեն։ Հեզ և բարեկիրթ ըլլալու համար թեթեւ ուշադրութիւն մը եթէ ի գործ դրուի, յոռի դատողութիւններուն առաջքը կ'առնուի։ հպարտ, անկիրթ, արհամարհող, անբարեւ տէր համարուելու համար գրեթէ բան մը պէտք չէ։ աւելի նուազ բան պէտք է առանց բոլորովին հակառակը համարուելու համար։ Եւ ո՞վ չգիտէր թէ, ո՛րչափ զգուշանալու ենք անհաճոյ կերպերով ուրիշները մեզմէ օտարացնելէ։ Թէ ո՛րչափ մեզի օգտակար է մեր շահերուն, մեր հանգստութեան, մեր հաճոյից տեսակէտով՝ անոնց հետ այդ բարեկամութիւնը պահել, որ բարեկրթութեամբ միայն կրնայ պահպանուիլ։

Թարգմ. Ն. Ծ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀՈԳՆԻՈՒ ՄՏԱՆՈՒԹԻՒՆԻ ԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Կ ի թ Ա. — Գ ի թ Ժ. — Բարի կրօնաւորի մը երանագացը վրայ։

(Շար.)

Մեծ օտերու տօներէն մեր քառի կրօնքիւնները պէտք է նորոգենք, եւ աւելի եռանդով հայցենք սրբոց օգնականութիւնը։

Ամեն մեկ օտի այնպէս առաջադրելու եմք, իբրեւ

րի ան առեմ այս աշխարհէս պիտի ելլեմք եւ յաւիտեանական թոնարաբնակարան պիտի հասնինք:

Ասոր համար ալ կը պատրիմք մեծ հոգածութեամբ ինկզիմէն պատրաստել շերտերանց ժամանակներու մէջ, եւ աւելի րատնապատեմ կենցաղավարիչ, ու ամեն կանոնները խստիւ եւ անբերի պահել, իբրեւ թիֆի ժամանակէն մեր աշխատանքին վարժել Աստուծոյ ընդունելիք ըլլայինք:

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՆ ԶԱՅՐԱՊԵՏ

(Եւր.)

Ս. Սահակ տեսնելով նախարարաց անգործ յամառութիւնը՝ ըսաւ. «Դուք կ'ուզէք Եւրոպիոյ հաւատարմութեամբ անհաւատներու ձեռքը քաշել ինչի, եւ չեմ կրնար ձեզ հետ միաբանել, չեմ կրնար իմ մարման ռիսկս քաղիլ բերանը տալ: Լաւ կը համարեմ մեռնիլ քան մէկ անտոյժ վարակուած հաւատացեալ մը՝ մասնակցութեամբ միտքով թափառելու մը: Եւ ինչո՞ւ միտքով թափառելու մը, զաւանդներս, մի՞ գործէք այդ չարիքը, մի՞ ջանաք տապալել ձեր թագաւորը, որպէս զի չըլլայ թէ ձեր եւ ամբողջ Հայաստանի կրօնական պատճառ ըլլաք:»

Նախարարները փոխանակ զգոռոտանալու, աւելի ըմբոստացան եւ յորդորեցին պատասխանեցին. «Փառնի որ յանձն չես առնուր հետեւինիս միաբանիլ՝ զքեզ ալ հայրապետութենէ պիտի ձգենք: Եւ այսպէս սպառնալիքով եւ բարկութեամբ Սուրբին քովէն դացին, եւ Սուրբի տնտեսով երէց մը գտան եւ խոստանալով զինքը կաթողիկոս ընել Սահակի տեղ, համոզեցին որ իրենց հետ Պարսից թագաւորին առջեւ ամբաստանութիւն ընէ Արտաշէի վրայ: Այս անտրտման երէցին հետ գացին նախարարները Պարսից դուռը, եւ ամբաստանեցին իրենց թագաւորը բարգելով անոր վրայ ալ եւ ալ յանցանքներ ալ, զորս չէին կրնար հաւատարմել, նոյնպէս Ս. Սահակին վրայ ալ ստացող ամբաստանութիւններ ըրին:

